

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը

ք.Հրազդան

21.10.2022թ. ժամը 11.⁰⁰

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Հ.Մկրտչյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Ս.Բաղդասարյան- ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
- Լ.Պետրոսյան- ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար
- Գ.Հակոբյան-«Կոտայք» ՋՕԸ տնօրենի պաշտոնակատար
- Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
- Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:
/զեկուցող՝ ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյան/

2. Ոռոգման ջրի մատակարարման և վարձավճարների գանձման աշխատանքների մասին:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյան/

3. Սեփական եկամուտների հավաքագրման վիճակը մարզի համայնքներում:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Մ.Պետրոսյան/

4. Վարժական հավաքների մասին:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի զորահավաքային նախապարտաւորության բաժնի պետ Հ.Մովսիսյան/

5. ՀՀ իրավական ակտերում կատարված մի շարք փոփոխությունների և նոր ընդունված իրավական ակտերի մասին:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Է.Գևորգյան/

6. Այլ հարցեր

ԼՍԵՑԻՆՆԵՐ

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանի զեկույցը մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:

Ձեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ իրավական և մասնագիտական վերահսկողության արդյունքում արձանագրված թերությունները և խախտումները վերացնելու, ինչպես նաև դրանք հետագայում բացառելու ուղղությամբ:

Հանձնարարվեց ՀՀ Կոտայքի մարզպետարանի ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանին՝

-Դեկլարելներին կայանալիք մարզի խորհրդի նիստին ներկայացնել տեղեկատվություններ իրական և մասնագիտական վերահսկողության արդյունքում արձանագրված թերությունները և խախտումները վերացնելու ուղղությամբ համայնքների կողմից իրականացված աշխատանքների և գործուն քայլերի մասին:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյանի զեկույցը ոռոգման ջրի մատակարարման և վարձավճարների գանձման աշխատանքների մասին:

Ձեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Համայնքներում ներտնտեսային ցանցերի վերանորոգման և արդիականացման աշխատանքները ներառել սուբվենցիոն ծրագրերում՝ համագործակցելով նաև «Կոտայք» ՋՕԸ-ի հետ:

-Հետևողական լինել վիճակագրական տվյալների ներկայացման գործընթացին:

3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Մ.Պետրոսյանի զեկույցը մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Ձեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել գործուն քայլեր սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը բարելավելու ուղղությամբ, ինչպես նաև բյուջեի համամասնությունների փոփոխությունները ներկայացնել մարզպետարան:

**4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ
Հ.Մովսիսյանի զեկույցը վարժական հավաքների մասին:**

Ձեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Սերտորեն համագործակցելով ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանման հետ՝ աջակցել պահեստազորային պատրաստության միջոցառումներին:

**5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար
Է.Գևորգյանի զեկույցը ՀՀ իրավական ակտերում կատարված մի շարք փոփոխությունների և
նոր ընդունված իրավական ակտերի մասին:**

Ձեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

6. Այլ հարցեր

*Անդրադարձ կատարվեց համայնքներում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող
աշխատանքներին, մարզպետարանի և ՀՀ ՏԿԵ նախարարության վերահսկողության վարչության
աշխատակիցների կողմից իրականացվող մշտադիտարկումներին:*

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Առանձնահատուկ ուշադրության կենտրոնում պահել սուբվենցիոն ծրագրերով իրականացվող
աշխատանքների որակի նկատմամբ հսկողության միջոցառումները, բացառել անորակ
աշխատանքների ընդունումը:

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ